

—Դժբաղդ որդիս, եկ ինձ հետ գնանք մայրաքաղաք, այնտեղ էլ ես փող ունեմ, պատասխանում է վերջապէս մայրը։ Եւ նրանք միասին ճանապարհում են Կ. Պօլիս։

Բայց Ստամբուլում յուսահատուած մայրը իր թշուառ որդուն փոխանակ բանկիրի մօտ՝ տանում է ոստիկանութեան նախարարի մօտ։

Ոստիկանութեան նախարարի մօտ ես Ստաւրոյին տեսայ իբրեւ փաշայի թիկնապահ ծառայ...

Թարգմ. գերմ. Ն. Բաքայեան

(Վերջը յաջորդ համարում)

*
* *

Թռչում է ոգիս՝ ազատ ու անվախ՝
Վեհ բարձրունքները խրոխտ լեռների.
Եւ գլխիս վերեւ լսում եմ յաճախ
Շառաչումները արծուի թևերի։

Հսում եմ ղօղանջն տիեզերական.—
Ոգիս բացւում է անծիր թևերով.
Անծիր թևերս գրկում են համայն
Աշխարհ է՝ աշխարհ և ծովեր է՝ ծով։

—Բացէք դարպասներն ձեր պալատների.
Ոգու յարութեան լոյսն եմ ձեզ բերում.
Ես փոթորիկն եմ անապատների
Եւ օձ-կայծակը մռայլ ամպերում...

Եւ մարգարէի հուրն է իմ կրծքում,
Սուրբ իմ ձեռքում, բարբառս ազատ.
Եւ ինձ յաւիտեան անմահ եմ զգում.
Եւ երկրի վերայ քայլերս հաստատ...

Աւ. Իսահակեան։